

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՌԻՍԿԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՈՂ ԶԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 1487-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10 նոյեմբերի 2011 թ.
N 1636-Ն

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2.1-ին հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել հարկային մարմնի գործունեության շրջանակներում ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 17-ի «Հարկային մարմնի կողմից ռիսկային չափանիշների հիման վրա պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգը կիրառելու մասին» N 1487-Ն որոշումը:

3. Մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն ստուգումներն իրականացնում է արդեն իսկ պլանավորած ցանկի համաձայն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

S. Սարգսյան

25 նոյեմբերի 2011 թ.
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2011 թվականի
նոյեմբերի 10-ի N 1636-Ն որոշման

ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՌԻՍԿԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՈՂ ԶԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սույնով կանոնակարգվում են հարկային մարմնի կողմից՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի (այսուհետ՝ ռիսկի համակարգ) կիրառման հետ կապված ընդհանուր հարցերը:

2. Ռիսկի համակարգի նպատակն է ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրությունը կառուցել ռիսկային չափանիշների հիման վրա՝ ըստ հարկ վճարողների առանձին, միատարր խմբերի:

II. ՌԻՍԿԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

3. Սույն կարգի իմաստով ռիսկը հարկ վճարողի կողմից հարկվող օբյեկտը թաքցնելու կամ այն պակաս ցույց տալու, հարկերը և այլ պարտադիր վճարները ճիշտ չհաշվարկելու և չվճարելու,

դրա հիման վրա հարկային մարմնի կողմից վերահսկվող՝ Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները չկատարելու հավանականությունն է և այդ խախտումներից ակնկալվող պետության վնասները:

III. ՌԻՍԿԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

4. Ռիսկի համակարգը հիմնված է հարկ վճարողների կողմից հարկային մարմին ներկայացված հաշվարկների, հաշվետվությունների (այսուհետ՝ հարկային հաշվարկներ) տվյալների, դրանց վերլուծության արդյունքների, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով այլ տեղեկությունների հիման վրա հարկ վճարողի գործունեության՝ ըստ ռիսկայնության աստիճանի գնահատման և դասակարգման վրա:

5. Ռիսկի համակարգի միջոցով ռիսկերի գնահատումն իրականացվում է հետևյալ քայլերի հաջորդականությամբ՝

Քայլ 1. հարկային մարմնում հաշվառված հարկ վճարողների՝ ըստ միատարր խմբերի խմբավորում (դասակարգում),

Քայլ 2. ռիսկային չափանիշների ձևավորում և դրանց ռիսկայնության աստիճանի (միավորի) հաշվարկման բանաձևերի սահմանում,

Քայլ 3. ռիսկային չափանիշների հիման վրա՝ ըստ հարկ վճարողների միատարր խմբերի հարկային հաշվարկների ռիսկայնության աստիճանի (միավորի) որոշում,

Քայլ 4. ռիսկայնության աստիճանի (միավորի) որոշման արդյունքներով՝ հարկ վճարողների՝ բարձր, միջին և ցածր խմբերի դասակարգում:

IV. ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԽՄԲԱՎՈՐՈՒՄԸ (ՂԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ) ԸՍՏ ՄԻԱՏԱՐՐ ԽՄԲԵՐԻ

6. Սույն համակարգի կիրառման առումով հարկային մարմնում հաշվառված հարկ վճարողները դասակարգվում են երկու խոշոր խմբերի՝

- 1) իրավաբանական անձինք,
- 2) անհատ ձեռնարկատերեր:

7. Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի խմբերից յուրաքանչյուրն իրենց հերթին բաժանվում են հարկ վճարողների հետևյալ միատարր խմբերի՝

1) օրենքով սահմանված՝ ԱԱՀ վճարող համարվելու շեմը չգերազանցող տարեկան շրջանառություն (գործունեությունից հասույթ) ունեցող հարկ վճարողներ.

2) օրենքով սահմանված՝ ԱԱՀ վճարող համարվելու շեմից բարձր տարեկան շրջանառություն (գործունեությունից հասույթ) ունեցող հարկ վճարողներ՝ բացառությամբ խոշոր հարկ վճարողների.

3) խոշոր հարկ վճարողներ (ներառվում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի համակարգի խոշոր հարկ վճարողների հարկային տեսչությունում սահմանված կարգով հաշվառված հարկ վճարողները):

V. ՌԻՍԿԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ

8. Ռիսկային չափանիշների ընտրության և դրանց ռիսկային միավորների արդյունավետ հաշվարկման նպատակով հաշվի են առնվում հետևյալ հիմնական սկզբունքները՝

1) հարկ վճարողների յուրաքանչյուր միատարր խումբ պետք է ունենա այդ խմբի համար բնորոշ և կիրառելի ռիսկային չափանիշներ.

2) ռիսկային չափանիշներն ըստ իրենց կարևորության ենթակա են տարբերակման:

VI. ՌԻՍԿԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

9. Ռիսկային չափանիշների ընտրությունը հիմնված է հարկային մարմնի կենտրոնական տվյալների բազայում առկա, հարկ վճարողի կողմից հարկային մարմին ներկայացված հարկային հաշվարկներում արտացոլված տվյալների, դրանց վերլուծության արդյունքների, հարկ վճարողի

թույլ տված օրենսդրական պահանջների խախտումների, վիճակագրական տվյալների և այլ տեղեկությունների վրա:

10. Սույն համակարգի կիրառման առումով հիմք են վերցվել հետևյալ ռիսկային չափանիշները՝
 - 1) շահութաբերության մակարդակը.
 - 2) ստուգման արդյունքները.
 - 3) նախկինում կատարված ստուգումների առկայությունը.
 - 4) հայտարարագրված շահույթ կամ վնաս ցուցանիշների առկայությունը.
 - 5) նախորդ տարիների շահութաբերության մակարդակների համադրման ցուցանիշները.
 - 6) ակտիվների, նվազեցվող կորուստների, փոխառությունների, հիմնական միջոցների, հարկվող շահույթի, վնասի, համախառն եկամուտ ցուցանիշների համադրման արդյունքները.
 - 7) գործունեության տարբեր վայրերի առկայությունը.
 - 8) իրացման շրջանառության, համախառն եկամտի ծավալները.
 - 9) հարկային հաշվարկների ուշացման, ճշգրտումների առկայությունը.
 - 10) հարկային արտոնությունների կիրառման առկայությունը.
 - 11) իրացման և ձեռքբերման ցուցանիշների համադրման արդյունքները.
 - 12) ներմուծման տվյալների և մաքսային արժեք ցուցանիշների համադրման արդյունքները.
 - 13) հետաձգված հարկերի առկայությունը.
 - 14) եկամտաբերության մակարդակը.
 - 15) արտաքին տնտեսական գործունեության առկայությունը.
 - 16) նախորդ տարիների եկամտաբերության մակարդակների համադրման ցուցանիշները.
 - 17) ընդհանուր ծախսերի և որոշ ծախսերի համադրման ցուցանիշները, տեսակարար կշիռները.
 - 18) քաղաքացիաիրավական պայմանագրերի առկայությունը.
 - 19) հարկման տարբեր ռեժիմների առկայությունը (ընդհանուր հարկման, հաստատագրված վճարներով հարկման և այլն).
 - 20) միջին ամսական աշխատավարձ ցուցանիշի համադրման արդյունքները.
 - 21) մեկ աշխատողի հաշվով իրացման շրջանառության, հարկվող շահույթի, հարկվող եկամտի ցուցանիշները:
11. Ռիսկային չափանիշների ընտրության ժամանակ հաշվի է առնվում, թե որքանով է տվյալ չափանիշն ընդգծում և վերհանում ռիսկը:

VII. ՌԻՍԿԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿՈՒՄԸ

12. Ռիսկային չափանիշներն ըստ իրենց կարևորության ենթակա են տարբերակման երեք խմբի՝ բարձր, միջին և ցածր: Տարբերակումը կատարվում է ռիսկային չափանիշներին համապատասխան կշիռների տրման եղանակով, որն ընդգրկում է 0.5-1.5 թվերի միջակայքը, այդ թվում՝

- բարձր խումբ, ընդգրկում է 1.3 - 1.5 թվերի միջակայքը,
- միջին խումբ, ընդգրկում է 0.8 – 1.2 թվերի միջակայքը,
- ցածր խումբ, ընդգրկում է 0.5 – 0.7 թվերի միջակայքը:

VIII. ՌԻՍԿԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

13. Ռիսկային չափանիշների՝ ըստ կարևորության տարբերակումից հետո հաշվարկվում է դրանց ռիսկայնության առավելագույն միավորը: Վերջինիս որոշման նպատակով, սույն մեթոդաբանության կիրառման առումով, որպես առավելագույն սահման, հիմք է վերցվել ամենաբարձր եռանիշ թիվը՝ 999-ը:

14. Յուրաքանչյուր ռիսկային չափանիշի առավելագույն միավորը հաշվարկվում է հետևյալ բանաձևի միջոցով՝

$$ՉԱՄ = ԱՄ / ԿՀ \times ՉԿ, \text{ որտեղ՝}$$

ՉԱՄ – չափանիշի առավելագույն միավորն է,

ԱՄ – առավելագույն սահմանն է,

ԿՀ – բոլոր չափանիշների կշիռների հանրագումարն է,

ԶԿ – տվյալ չափանիշին տրված կշիռն է:

15. Հնարավոր է, որ չափանիշներն ունենան գնահատման մի քանի միջակայքեր, հետևաբար, ըստ այդ միջակայքերի, ռիսկային տարբեր միավորներ: Նման դեպքերում, ավելի բարձր միավորը ցույց է տալիս ավելի բարձր ռիսկ:

16. Յուրաքանչյուր չափանիշի առավելագույն միավորը հաշվարկելուց հետո որոշվում են տվյալ չափանիշի միջակայքերի ռիսկային միավորները:

IX. ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ՌԻՍԿԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ

17. Հարկ վճարողի կողմից հարկային մարմին ներկայացված հարկային հաշվարկի ռիսկայնության միավորը հաշվարկվում է որպես առանձին չափանիշների ռիսկային միավորների հանրագումար:

18. Գնահատված հարկային հաշվարկների ռիսկային միավորները պահվում են հարկային մարմնի կենտրոնական տվյալների բազայում:

19. Հարկային հաշվարկների ռիսկային միավորը հաշվարկվում է այդ հաշվարկների ներկայացման համար օրենքով սահմանված ժամկետին հաջորդող առաջին աշխատանքային օրը: Օրենքով սահմանված ժամկետից հետո ներկայացված, ինչպես նաև ճշգրտված հաշվարկների ռիսկային միավորը հաշվարկվում է յուրաքանչյուր ամսվա կտրվածքով, դրանց ներկայացման ամսվան հաջորդող ամսվա առաջին աշխատանքային օրը:

20. Ճշգրտված հարկային հաշվարկների ներկայացման դեպքում հիմք է ընդունվում այդ հաշվարկների ռիսկային միավորը:

21. Ստուգումների պլանավորման նպատակով հիմք է վերցվում գնահատված հարկային հաշվարկների տարեկան ռիսկային միավորը:

22. Յուրաքանչյուր հարկային հաշվարկի տարեկան ռիսկային միավորը, տվյալ տարում ամսական (եռամսյակային) կտրվածքով գնահատված հարկային հաշվարկների ռիսկային միավորների միջին թվաբանական է, իսկ տարեկան կտրվածքով հարկային հաշվարկների համար՝ տվյալ հաշվարկի ռիսկային միավորը:

23. Սույն համակարգի կիրառման առումով գնահատման ենթակա բոլոր հարկային հաշվարկները պարտադիր գնահատվում են:

X. ԳՆԱՀԱՏՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԸՍՏ ՌԻՍԿԱՅԻՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

24. Ըստ ռիսկային միավորների նվազման հաջորդականության՝ հարկ վճարողները դասակարգվում են բարձր, միջին և ցածր խմբերի:

25. Եթե հարկ վճարողը հարկային հաշվարկների տարեկան ռիսկային միավորների հիման վրա միաժամանակ ներառվել է ռիսկայնության տարբեր խմբերում, ապա տվյալ հարկ վճարողի ռիսկայնության խումբը որոշվում է հիմք ընդունելով տարեկան ամենաբարձր ռիսկային միավոր ունեցող հարկային հաշվարկը:

26. Բարձր ռիսկայնության խմբում ընդգրկվում են հարկ վճարողների 20 տոկոսը, միջին խմբում՝ 30 տոկոսը, իսկ ցածր ռիսկայնության խմբում՝ 50 տոկոսը:

Յուրաքանչյուր խմբում (բարձր, միջին, ցածր) ընդգրկման ենթակա հարկ վճարողների թիվը որոշվում է յուրաքանչյուր հարկային հաշվարկի գծով հարկ վճարողների թվի և տվյալ հարկային հաշվարկի համամասնության արտադրյալով:

Յուրաքանչյուր հարկային հաշվարկի համամասնությունը որոշվում է՝ հարկ վճարողների թիվը բազմապատկելով համապատասխան խմբում ընդգրկման ենթակա հարկ վճարողների տոկոսով (բարձր խմբի համար՝ 20 տոկոս, միջին խմբի համար՝ 30 տոկոս, ցածր խմբի համար՝ 50 տոկոս) և հարաբերելով բոլոր հարկային հաշվարկների գծով հարկ վճարողների թվի հանրագումարին:

«Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով պարտադիր աուդիտի ենթակա, սակայն աուդիտ չանցած հարկ վճարողները, անկախ ռիսկի համակարգով գնահատման արդյունքներից, ներառվում են ռիսկայնության բարձր խմբում:

XI. ՌԻՍԿԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶԱՆ

27. Ռիսկի համակարգի համար հիմք է հանդիսանում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կենտրոնական տեղեկատվական բազան, որում առկա են ռիսկի համակարգի կիրարկման համար անհրաժեշտ տվյալները, այդ թվում՝ հարկ վճարողների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն (ռեգիստր), նրանց կողմից հարկային մարմին ներկայացված հարկային հաշվարկներ, ինչպես նաև այլ տեղեկություններ:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար

Դ. Սարգսյան